ՍԴ3/0158/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի հուլիսի 7-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Արամ Ռոբերտի Գասպարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 34-38-225-րդ հոդվածի 1-ին մասով, Ջարուհի Տոնիկի

Տոնապետյանի, Անուշ Արթուրի Միրզոյանի և Ալեքսան Մարտիկի Գրիգորյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-225-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 69126725 (ՍԴ3/0158/01/25) քրեական վարույթը:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Գասպարյան) 2025 թվականի հուլիսի 11-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 24-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Մանուկյան) 2025 թվականի օգոստոսի 11-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 22-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Արամ Գասպարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-225-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա, զբաղեցնելով «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության անվտանգության դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը, հատուկ տեղյակ լինելով ՀՀ վարչապետ Նիկոլի Փաշինյանի 2021թ. ապրիլի 21-ին Սյունիքի մարզ այցելելու՝ մարզում շրջայցի ընթացքում բնակիչներին հանդիպելու հանգամանքի մասին, նպատակադրվել է Սյունիքի մարզի Մեղրի, Ագարակ և Շուռնուխ*

բնակավայրերում կազմակերպել զանգվածային անկարգություններ, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել: (...)»[1]:

6.1. Զարուհի Տոնապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-225-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա, հանդիսանալով «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական դեպարտամենտի ղեկավար, միաժամանակ ղեկավարելով «Զանգեզուրի պզնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական ընկերությանը պատկանող «Զանգեզուր TV» լրատվամիջոցը, տեղեկացված լինելով 2021 թվականի ապրիլի 21-ին Սյունիքի մարզ Վարչապետի և մի շարք այլ պաշտոնատար անձանց այցի կապակցությամբ Արամ Գասպարյանի կողմից զանգվածային անկարգություններ կազմակերպելու մտադրության մասին, վերջինիս կողմից նպատակադրված հանցանքն իրագործելուն նպաստելու դիտավորությամբ համաձայնվել է որպես միջոց տրամադրել լրատվական ծառայության հնարավորությունները՝ ապահովելու կազմակերպված բնույթ կրող հակահրավական գործողությունների ուղիղ հեռարձակումը՝ բնակչության շրջանում պետական մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ դժգոհություն և անհանդուրժողականության մեծ ալիք բարձրացնելու, հասարակական կարգը խախտող հակահրավական գործողություններն արդարացնելու, դրանց մեծ թափ հաղորդելու, հակահրավական գործողությունների կատարմանը մեծ թվով անձանց ներգրավելու, մասնակիցների թիվն ավելացնելու, նրանց մոտ բռնության, գույքի ոչնչացման, վնասման և այլ հակահրավական գործողություններ կատարելու վճռականություն հարուցելու, ներգրավված անձանց ավելի ագրեսիվ գործողությունների մղելու, նշված հակահրավական գործողությունները զանգվածային անկարգությունների վերածելու նպատակով: (...)»*[2]:

6.2. Անուշ Միրզոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-225-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա, հանդիսանալով «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական դեպարտամենտի ղեկավար Զարուհի Տոնիկի Տոնապետյանի կողմից*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 115-119:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 41-45:

ղեկավարվող «Զանգեզուր TV» լրատվամիջոցի լրագրող, տեղեկացված լինելով 2021 թվականի ապրիլի 21-ին Սյունիքի մարզ Վարչապետի և մի շարք այլ պաշտոնատար անձանց այցի կապակցությամբ Արամ Գասպարյանի կողմից զանգվածային անկարգություններ կազմակերպելու մտադրության մասին, վերջինիս կողմից նպատակադրված հանցանքն իրագործելուն նպաստելու դիտավորությամբ համաձայնել է կազմակերպված բնույթ կրող հակահրավական գործողությունները ուղիղ հեռարձակմամբ լուսաբանելով, հանրությանը հակահրավական գործողությունների մասին տեղեկություն տրամադրելու եղանակով օժանդակել նպատակադրված հանցանքի կազմակերպմանը: (...)»[3]:

6.3. Ալեքսան Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-225-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա, հանդիսանալով «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական դեպարտամենտի ղեկավար Զարուհի Տոնիկի Տոնապետյանի կողմից ղեկավարվող «Զանգեզուր TV» լրատվամիջոցի տնօրեն և օպերատոր, տեղեկացված լինելով 2021 թվականի ապրիլի 21-ին Սյունիքի մարզ Վարչապետի և մի շարք այլ պաշտոնատար անձանց այցի կապակցությամբ Արամ Գասպարյանի կողմից զանգվածային անկարգություններ կազմակերպելու մտադրության մասին, վերջինիս կողմից նպատակադրված հանցանքն իրագործելուն նպաստելու դիտավորությամբ համաձայնել է կազմակերպված բնույթ կրող հակահրավական գործողությունները ուղիղ հեռարձակմամբ լուսաբանելով, հանրությանը հակահրավական գործողությունների մասին տեղեկություն տրամադրելու եղանակով օժանդակել նպատակադրված հանցանքի կազմակերպմանը: (...)»*[4]:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ, քննության առնելով պաշտպանի միջնորդությունը, արձանագրել է հետևյալը. *«(...) Պաշտպան Ա.Վարդևանյանն էլեկտրոնային եղանակով 21.07.2025թ. միջնորդություն է ներկայացրել Դատարան, որով, ի թիվս այլնի, հայտնել է, որ մեղադրյալներից երկուսը հաշվառված և բնակվում են Երևան քաղաքում, ավելին՝ բոլոր պաշտպանները, ովքեր ներգրավված*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 142-146:
[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 6, թերթեր 94-98:

են վարույթին և այժմ ներկայացնում են մեղադրյալների շահերը, այդ թվում՝ և ինքը, ևս հաշվառված և փաստացի բնակվում են Երևան քաղաքում, ինչն էական նշանակություն ունի գործի քննության ընթացքում նրանց լիարժեք մասնագիտական ներգրավվածության և դատավարական պարտականությունների պատշաճ իրականացման տեսանկյունից:

Բացի այդ, վկաների զգալի և նույնիսկ գերակշռող մասը հաշվառված և բնակվում են Երևան քաղաքում կամ Երևան քաղաքին սահմանակից համայնքներում, այդ թվում՝ Աբովյան, Էջմիածին, Չարենցավան և այլ բնակավայրերում, ինչը գործի քննության գործընթացի կազմակերպման առումով ևս ունի առանցքային նշանակություն:

Դատական նիստերին մասնակցելու համար Գորիս քաղաք տեղափոխվելը վարույթին ներգրավված անձանց մեծամասնության համար առաջացնելու է լուրջ, մշտական և գործի քննությանը խոչընդոտող դժվարություններ, ինչպիսիք են տրանսպորտային հասանելիության և ժամանակի արդյունավետ կազմակերպման դժվարություններ, զգալի ֆինանսական և տեխնիկական ծախսեր, վկաների և փորձագետների՝ դատարան ներկայանալու փաստացի անհնարինություն, դատական նիստերի բազմակի հետաձգման ռիսկ՝ կողմերի չներկայանալու պատճառով:

Այսպիսով՝ նշված հանգամանքների ամբողջությունը վկայում է այն մասին, որ գործի քննության շարունակումը Երևան քաղաքում առավել նպաստավոր է ինչպես քրեադատավարական պատշաճ ապահովման, այնպես էլ կողմերի իրավաչափ շահերի իրացման տեսակետից:

Վերոգրյալի հիման վրա Դատարանին միջնորդել է բոլոր մեղադրյալների համաձայնության դեպքում՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Դատական նիստում պաշտպաններ Մ.Սաֆարյանը, Ա.Սարգսյանն ու Է.Հովհաննիսյանը միացան պաշտպան Ա.Վարդևանյանի կողմից ներկայացված միջնորդությանն ու Դատարանին խնդրեցին այն բավարարել:

Մեղադրյալներ Ա.Գասպարյանը, Ջ.Տոնապետյանը, Ա.Միրզոյանն ու Ա.Գրիգորյանը Դատարանին հայտնեցին իրենց համաձայնությունը՝ վարույթն ըստ

ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին փոխանցելու կապակցությամբ:

Հանրային մեղադրող Գ.Մինասյանն ըստ էության չառարկեց միջնորդության դեմ: (...)

Դատարանն արձանագրում է, որ.

Մեղադրյալ Արամ Ռոբերտի Գասպարյանը հաշվառված է Երևան քաղաքի Թումանյան փողոցի 16-րդ շենքի 4-րդ բնակարանում, սակայն փաստացի բնակվում է Երևան քաղաքի Զաքյան փողոցի 8-րդ շենքի 33-րդ բնակարանում:

Մեղադրյալ Զարուհի Տոնիկի Տոնապետյանը հաշվառված և բնակվում է Երևան քաղաքի Մանանդյան փողոցի 16-րդ շենքի 22-րդ բնակարանում:

Մեղադրյալ Անուշ Արթուրի Միրզոյանը հաշվառված է Քաջարան քաղաքի Լեռնագործների փողոցի 19-րդ շենքի 22-րդ բնակարանում, սակայն դատաքննությունների ընթացքում Դատարանին հայտնեց, որ փաստացի բնակվում է և՛ նշված հասցեում, և՛ Երևան քաղաքի Նանսենի փողոցի 26-րդ շենքի 2-րդ բնակարանում, ավելին՝ հիմնականում բնակվում է Երևան քաղաքում:

Վարույթին ներգրավված թվով 10 (տասը) տուժողներից թվով 5 (հինգ) տուժողներ բնակվում են Երևան քաղաքում:

Վարույթին ներգրավված թվով 12 (տասներկու) վկաներից թվով 8 (ութ) վկաներ բնակվում են Երևան քաղաքում:

Պաշտպաններ Մերի Սաֆարյանը, Արմինե Սարգսյանն ու Էդուարդ Հովհաննիսյանը դատաքննությունների ընթացքում Դատարանին հայտնեցին, որ իրենք ևս բնակվում են Երևան քաղաքում (...):

Պաշտպաններ Արամ Վարդևանյանն ու Կարինե Խումարյանը ևս բնակվում են Երևան քաղաքում (...):

Մեղադրյալներ Ա.Գասպարյանը, Զ.Տոնապետյանը, Ա.Միրզոյանն ու Ա.Գրիգորյանը տվել են իրենց համաձայնությունը՝ վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին փոխանցելու կապակցությամբ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը

բնակվում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Բացի այդ, ինչպես վերը նշվեց, մեղադրյալներ Ա.Գասպարյանը, Ջ.Տոնապետյանը, Ա.Միրզոյանն ու Ա.Գրիգորյանը տվել են իրենց համաձայնությունը՝ վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին փոխանցելու կապակցությամբ: Հետևաբար՝ Դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա են վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված պայմանները:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոշարադրյալն ու ելնելով արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, ինչպես նաև քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական բնույթի խնդիրներն ու ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտումները բացառելու, ավելին՝ նաև պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից՝ Դատարանը գտնում է, որ մեղադրյալներ Արամ Ռոբերտի Գասպարյանի վերաբերյալ՝ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 34-38-225-րդ հոդվածի 1-ին մասով և Ջարուհի Տոնիկի Տոնապետյանի, Անուշ Արթուրի Միրզոյանի ու Ալեքսան Մարտիկի Գրիգորյանի՝ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 38-34-225-րդ հոդվածի 1-ին մասով, թիվ ՍԴ3/0158/01/25 (մինչդատական վարույթի համարը՝ 69126725) քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (...)»[5]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը փաստում է, որ տվյալ քրեական վարույթով ներգրավված են չորս մեղադրյալ, տասը տուժող, տասներկու վկա, ինչպես նաև հինգ պաշտպան:*

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 121-124:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ տվյալ դեպքում ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին 2025 թվականի հուլիսի 24-ի որոշումը կայացրել է պաշտպան Ա.Վարդևանյանի միջնորդության հիման վրա և արդյունքում Դատարանն արձանագրել է, որ սույն դեպքում քրեական վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Մինչդեռ, Դատարանն արձագրում է, որ զուտ թվաբանական հաշվարկի պայմաններում ստացվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների ընդհանուր թիվը տասնինը և տասնմեկ հարաբերակցությամբ է բաժանվում, սակայն այս առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տվյալ տասնինը անձանցից հինգը հանդիսանում են մասնավոր պաշտպաններ:

Հարկ է այս առումով արձանագրել, որ վկայակոչած որոշումը կայացվել է հենց մասնավոր պաշտպանի միջնորդության հիման վրա: Տվյալ պարագայում Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատության հարցը քննարկելիս չպետք է այն հաղիսանա սոսկ թվաբանական հաշվարկի արդյունք, այլ պետք է այն իրապես բիի արդարադատության շահից: Այսինքն՝ դա պետք է իրականացվի վարույթի քննությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական բնույթի խնդիրներից խուսափելու և ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովման նպատակով:

Մինչդեռ, սույն պայմաններում հարկ է նկատել, որ եթե հինգ մասնավոր պաշտպանների հանգամանքը հաշվի չառնվի, ապա վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների թվաքանակի հարաբերակցությունը կլինի տասնչորս և տասնմեկ:

Այլ կերպ՝ վկայակոչած որոշման ամբողջական ուսումնասիրության արդյունքում Դատարանը գտնում է, որ այն կայացվել է առավելապես ի օգուտ պաշտպանների դիրքորոշման հիման վրա: Այնինչ՝ այս առումով հարկ է նշել, որ գաղտնիք չէ, որ մասնավոր պաշտպանների մեծամասնությունը հանդիսանում են Երևանաբնակ և հանդես են գալիս Երևան քաղաքում, ինչը սույն դեպքում առկա է:

Այսինքն՝ սույն վարույթով ներգրավված հինգ պաշտպանները հանդիսանում են Երևանաբնակ և տվյալ պաշտպանների համար առավել հեշտ ու դյուրին կլինի, եթե վարույթը քննվի ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում: Մինչդեռ, ինքնին միայն պաշտպանների համար վարույթի քննությունը հեշտ և դյուրին կազմակերպելու նպատակը բավարար չէ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար:

Այսինքն՝ սույն դեպքում վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս քննարկման առարկա է դարձվել միայն պաշտպանների և մեղադրյալների դիրքորոշումները, սակայն որևէ կերպով անդրադարձ չի կատարվել այն տասնմեկ անձի հարցին, ովքեր չեն հանդիսանում Երևանաբնակ և որոնց մեծամասնությունը հանդիսանում է Սյունիքի մարզի բնակիչ: Այլ կերպ՝ ստացվում է մի իրավիճակ, որ մասնավոր հիմունքներով ներգրավված պաշտպանների գործունեությունն ավելի հեշտ և դյուրին դարձնելու նպատակով վարույթն ուղարկվել է մեկ այլ դատարանի դատական տարածք՝ անտեսելով տուժողների իրավունքները, քանի որ վերջիններս՝ հատկապես հենց նաև Սյունիքի մարզի բնակիչները, այդ կապակցությամբ որևէ դիրքորոշում չեն հայտնել և ավելորդ չէ փաստել, որ նրանք առանց վարձատրության (խոսքը վերաբերում է տուժողներին և վկաներին) ներկայանալու են դատալսումներին: Դատարանը գտնում է, որ վերջիններիս իրավունքներն այդ առումով կարող են վտանգվել: Այսինքն՝ Դատարանի գնահատմամբ՝ զուտ թվաբանական հաշվարկ իրականացնելը և ինքնին մի քանի անձի տարբերության պայմաններում վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելն, այդքան էլ չի բխում վարույթի արդար դատաքննության նկատառումներից, քանի որ գործի քննության ընթացքում ինչպես պետք է տվյալ տասնչորս անձը ներկայանան, այնպես էլ պետք է ներկայանան մյուս տասնմեկ անձը: Մինչդեռ, հատկանշական է այն, որ ցանկացած դեպքում, եթե անձը կամ անձինք ունենան մասնավոր հիմունքներով պաշտպաններ, առավել քան շատ է հավանականությունը, որ այդ պաշտպանները հանդիսանալու են Երևան քաղաքից և բնականաբար նրանց համար առավել քան հեշտ և դյուրին է լինելու Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական

դատարան ներկայանալը, քան՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հետևաբար, այսպիսի պայմաններում առավելապես մասնավոր հիմունքներով հրավիրված պաշտպանների գործունեությունը հեշտացնելու նպատակով վարույթն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան և չանդրադառնալ մյուս տասնմեկ անձի իրավունքների ապահովմանը, Դատարանը գտնում է, որ թեև թվաքանակի առումով վարույթի Երևանաբնակ մասնավոր մասնակիցները և վկաները շատ են, սակայն սույն դեպքում տվյալ թվաքանակի տարբերությունը չի կայանում մեկ կամ երկու անձով, այլ՝ տասնմեկ անձի մասին է խոսքը գնում: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, որ ցանկացած մաթեմատիկական չոր հաշվարկի դեպքում կարող է գործերը մշտապես ուղարկել ըստ ընդդատության տվյալ հիմքով, մինչդեռ թեև օրենսդիրը նախատեսել է, որ այս հարցը կարող է քննարկվել, այսինքն՝ դա միանշանակ չէ, որ ցանկացած դեպքում, եթե անձանց քանակը շատ է, ուրեմն պետք է այդ միջնորդությունը բավարարվի: Դատարանը գտնում է, որ այդպիսի միջնորդությունը պետք է այնպես քննարկվի, որ դրանով ոչ միայն հեշտացվի մի կողմի գործունեությունը, այլ հանգեցնի ընդհանուր վարույթի քննության հեշտացմանը, քանի որ հակառակ պարագայում առնվազն այդ տասնմեկ անձի ներկայությունն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ապահովելու հետ կապված նույնպես առաջանալու են տեխնիկական խնդիրներ: Նման մոտեցման պայմաններում կարող է իրավակիրառ պրակտիկայում ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ եթե օրինակ՝ վարույթով անցնող երեք մասնավոր մասնակիցներից երկուսը՝ ավելի կոնկրետ մեղադրյալը և պաշտպանը, հանդիսանան Երևան քաղաքի բնակիչ և նման միջնորդությամբ հանդես գան, ապա վարույթը պետք է մշտապես ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Այլ կերպ, Սյունիքի մարզի տարածքում Երևանաբնակ քաղաքացու կողմից ցանկացած (կամ գոնե հիմնական դեպքերում) հանցանք կատարելու և մասնավոր մասնակիցների՝ Երևան քաղաքում բնակվելու դեպքում վարույթը պետք է ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Դատարանի գնահատմամբ՝ այսպիսի

պայմաններում կիմաստագրկվի նաև տարածքային ընդդատության ինստիտուտը և կգործի միայն վարույթի մասնավոր մասնակիցների բնակության վայրի դատարանում վարույթի քննության սկզբունքը:

Այսինքն՝ վերոգրյալի արդյունքում կարելի է արձանագրել, որ թեև առաջին հայացքից հնարավոր է տպավորություն ստեղծվի, որ օրենսդրական պայմանները պահպանված են, սակայն Դատարանը գտնում է, որ սույն դեպքում պետք է ոչ միայն օրենսդրական պայմանները ձևականորեն (զուտ տեխնիկական, թվաբանական հաշվարկի արդյունքում) պահպանվեն, այլ դա պետք է կոնկրետ նպատակ հետապնդի, մասնավորապես բիսի արդարադատության շահից: Հակառակ պարագայում կստացվի, որ զուտ թվաբանական հաշվարկի և միջնորդության առկայության դեպքում յուրաքանչյուր վարույթ պետք է ուղարկվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, ինչը չի կարող ցանկացած պարագայում ողջամիտ համարվել կամ առնվազն բխել արդարադատության շահից և վարույթի արդյունավետ քննությունից, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ սույն դեպքում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը լսել է միայն մեղադրյալների և նրանց պաշտպանների դիրքորոշումները, որոնցից յոթ անձ հանդիսացել է Երևանաբնակ, սակայն սույն դեպքում չի լսվել առնվազն տուժողների դիրքորոշումները, որպիսի պայմաններում էլ Դատարանը գտնում է, որ կարող են վտանգվել տուժողների իրավունքները:

Բացի այդ էլ, հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նշվել է հետևյալ պատճառաբանությունը՝ «(...) ելնելով արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, ինչպես նաև քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական բնույթի խնդիրներն ու ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտումները բացառելու, ավելին՝ նաև պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից (...)»: Մինչդեռ, այս կապակցությամբ հարկ է նշել, որ նախ պարզ չէ, թե պետության ինչ ֆինանսական ռեսուրսները խնայելու

մասին է խոսքը գնում, այսինքն՝ մասնավոր հիմունքներով վարձատրվող փաստաբանների, թե չվարձատրվող փորձագետների և վկաների, թե այլ հանգամանքների մասին: Մինչդեռ, առնվազն այս մասով Դատարանը գտնում է, որ արդարացված չէ մասնավոր հիմունքներով վարձատրվող փաստաբանների ֆինանսական ռեսուրսները խնայելու նպատակով, առավել ֆինանսական պարտավորությունների բեռը թողնել Երևան քաղաքի տարածքից դուրս բնակվող փորձագետների և վկաների վրա: Միևնույն ժամանակ վկայակոչած որոշմամբ պատճառաբանված չէ, թե հակառակ պարագայում, օրինակ, եթե վարույթը քննվեր Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ապա ինչից ելնելով չէին պահպանվի վերը նշված նկատառումները:

Ընդ որում, նման դիրքորոշում արտահայտելիս՝ Դատարանը հաշվի է առնում նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացող՝ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից այս հիմնավորմամբ ուղարկված բազմաթիվ քրեական գործերը և դրանց արդյունքում առաջացած շրջապտույտները (...)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 4-13:

«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[7]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[8]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)*

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (...)»[9]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

---

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

14.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են թվով երեսունմեկ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից մեղադրյալներ Ա.Գասպարյանի, Ջ.Տոնապետյանի, հինգ պաշտպանների, հինգ տուժողների և ութ վկաների բնակության վայրն է Երևան քաղաքը[10], մեղադրյալներ Ա.Միրզոյանի, Ա.Գրիգորյանի, երեք տուժողների, և երկու վկաների բնակության վայրն է Սյունիքի մարզը, տուժող [redacted] բնակության վայրն է Արագածոտնի մարզը, [redacted] բնակության վայրն է Արարատի մարզը, վկա [redacted] բնակության վայրն է Կոտայքի մարզը, իսկ [redacted] բնակության վայրն է Վայոց ձորի մարզը[11]:

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 143:

[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 103-105, հատոր 8, դատական նիստի արձանագրություն, թերթեր 115-119:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իր համաձայնությունն են հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ[12], որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը բխում է արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու, ինչպես նաև քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական բնույթի խնդիրներն ու ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտումները բացառելու անհրաժեշտությունից, ավելին՝ նաև պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից[13]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ զուտ թվաբանական հաշվարկ իրականացնելը և ինքնին մի քանի անձի տարբերության պայմաններում վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելը չի բխում վարույթի արդար դատաքննության նկատառումներից, հատկապես հաշվի առնելով, որ Երևան քաղաքում բնակվող մասնավոր մասնակիցներից հինգը հանդիսանում են մասնավոր պաշտպաններ:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հիմք է ընդունել միայն պաշտպանների և մեղադրյալների դիրքորոշումները, ինչը կարող է վտանգել տուժողների իրավունքները[14]:

---

[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, դատական նիստի արձանագրություն, թերթեր 115-119:
[13] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[14] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթին ներգրավված են երեսունմեկ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ քսան անձ, բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Հարկ է նշել, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքում բնակվելու հանգամանքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը կասկածի տակ չի դրել:

17. Սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում նշել նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը արդարադատության շահի տեսանկյունից բացակայել է:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ3/0158/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ